



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS  
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

**ԱՅՎԱԶՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

*(Գանգաղ թիվ 46245/08)*

ՎՃԻՌ

ԱՏՐԱՍԲՈՒՐԳ

18 հոկտեմբերի 2018թ.

*Սույն վճիռը վերջնական է, սակայն կարող է  
ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*

**Այվազյանն ընդդեմ Հայաստանի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),  
հանդես գալով Կոմիտեի հետեյալ կազմով՝

Քրիստինա Պարդալոս [Kristina Pardalos]՝ *Նախագահ,*

Քսենյա Տուրկովիչ [Ksenija Turković],

Թիմ Այքը [Tim Eicke]՝ *դատավորներ,*

եւ Ռենատա Դեգեներ [Renata Degener]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,*

2018 թվականի սեպտեմբերի 25-ին անցկացնելով դոնփակ  
խորհրդակցություն,

կայացրեց հետեյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար  
ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ  
հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն Մասիս  
Այվազյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2008  
թվականի սեպտեմբերի 12-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ  
46245/08) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն  
Մ. Շուշանյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը  
(Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական  
դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր  
ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. 2012 թվականի նոյեմբերի 27-ին 2008 թվականի մայիսի 1-ից 13-ն ընկած  
ժամանակահատվածում դիմումատուի ենթադրյալ անօրինական կալանքի

վերաբերյալ բողոքը, իսկ 2017 թվականի փետրվարի 21-ին՝ դիմումատուի կալանավորման համար հիմնավոր եւ բավարար պատճառների ենթադրյալ բացակայության վերաբերյալ բողոքն ուղարկվել են Կառավարություն:

## ՓԱՍՏԵՐԸ

### I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուն ծնվել է 1956 թվականին եւ ապրում է Ջրվեժում:

5. 2008 թվականի փետրվարի 19-ին Հայաստանում տեղի են ունեցել նախագահական ընտրություններ, որին հաջորդել են փետրվարի 20-ից սկսած ամեն օր Երեւանի Ազատության հրապարակում ընդդիմության հիմնական թեկնածուի աջակիցների կողմից անցկացվող բողոքի ցույցերը: 2008 թվականի մարտի 1-ին Ազատության հրապարակում հավաքը ցրվել է ոստիկանության կողմից: Դիմումատուն, որն այդ ժամանակ եղել է Ազատության հրապարակում, ձերբակալվել է եւ ավելի ուշ դատապարտվել Քրեական օրենսգրքի (ՔՕ) 316-րդ հոդվածի 1-ին մասով՝ ոստիկանության աշխատակիցների նկատմամբ բռնություն գործադրելու մեղադրանքով:

6. 2008 թվականի մարտի 4-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել դիմումատուի նկատմամբ երկամսյա ժամկետով, այն է՝ մինչեւ 2008 թվականի մայիսի 1-ը, մինչդատական կալանք կիրառելու մասին՝ այն հիմքով, որ դիմումատուն ընդհանուր առմամբ կարող էր թաքնվել եւ խոչընդոտել քննությունը՝ անօրինական ազդեցություն գործադրելով քրեական վարույթում ներգրավված անձանց վրա:

7. 2008 թվականի մարտի 10-ին դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ պնդելով, որ իր կալանավորման անհրաժեշտությունը հիմնավորող

որեւէ ապացույց չի ներկայացվել: Նա ոստիկանության նախկին բարձրաստիճան ծառայող եւ օրինապահ քաղաքացի էր եւ հասարակության մեջ վստահություն ու հարգանք էր վայելում:

8. 2008 թվականի մարտի 21-ին Վերաքննիչ քրեական դատարանը մերժել է բողոքը՝ գտնելով, որ այն փաստը, որ դիմումատուին մեղադրանք է առաջադրվել մինչեւ տասը տարվա ազատազրկմամբ պատժվող ծանր հանցագործության համար, մեծացնում է վերջինիս՝ քրեական պատասխանատվությունից եւ պատժից խուսափելու հավանականությունը եւ բավարար է եզրակացնելու համար, որ դիմումատուն ընդհանուր առմամբ կարող է նոր հանցանք կատարել: Ինչ վերաբերում է դիմումատուի լավ բնութագրին, որը վերջինիս կողմից հիշատակվել էր իր վերաքննիչ բողոքում, ապա սա բավարար չէր կալանավորման որոշումը վերացնելու համար:

9. 2008 թվականի ապրիլի 29-ին կազմվել է մեղադրական եզրակացություն, եւ դիմումատուի գործն ուղարկվել է դատական քննության: Քրեական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 138-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով դիմումատուն շարունակել է մնալ կալանքի տակ:

10. 2008 թվականի մայիսի 13-ին Վարչական շրջանի դատարանը գործը դատական քննության նշանակելու վերաբերյալ որոշում է կայացրել՝ նույն որոշմամբ հաստատելով, որ դիմումատուի կալանքը պետք է թողնել անփոփոխ: Այդ որոշումը վերաքննիչ կարգով չի բողոքարկվել:

11. 2008 թվականի հունիսի 11-ին Վարչական շրջանի դատարանը ՔՕ-ի 316-րդ հոդվածի 1-ին մասով դիմումատուին մեղավոր է ճանաչել ոստիկանության աշխատողների նկատմամբ բռնություն գործադրելու համար եւ նրան դատապարտել մեկ տարի եւ վեց ամիս ժամկետով ազատազրկման:

## II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

12. Ներպետական օրենսդրության համապատասխան դրույթների համառոտ նկարագրությանը ծանոթանալու համար տե՛ս *Պողոսյանն ընդդեմ Հայաստանի* [Poghosyan v. Armenia] (44068/07, §§ 26-41, 2011 թվականի դեկտեմբերի 20) եւ *Արա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի* [Ara Harutyunyan v. Armenia] (թիվ 629/11, §§ 30-32, 2016 թվականի հոկտեմբերի 20) գործերով վճիռները:

## ԻՐԱՎՈՒՆՔԸ

## I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՆԹԱԴԻՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

13. Դիմումատուն բողոքել է, որ 2008 թվականի մայիսի 1-ից մինչեւ 13-ն իրեն կալանքի տակ պահելը չի թույլատրվել դատարանի կողմից եւ հետեւաբար անօրինական է եղել: Նա հիմնվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի վրա, որն այնքանով, որքանով վերաբերելի է, ունի հետեւյալ բովանդակությունը.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության եւ անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետեւյալ դեպքերում եւ օրենքով սահմանված կարգով...»

## Ա. Ընդունելիությունը

14. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները: Մասնավորապես, իր կալանքի անօրինական լինելու հիմքով ազատ արձակվելու միջնորդությամբ նա չի դիմել ոչ կալանավայրի վարչակազմին, ոչ էլ գործը քննող դատարան: Նա այդ հարցը չի բարձրացրել նաեւ 2008 թվականի հունիսի 11-ին Վարչական շրջանի դատարանի

կողմից իր դատապարտման դեմ Վերաքննիչ քրեական դատարան եւ Վճռաբեկ դատարան ներկայացված բողոքներում:

15. Կառավարությունն այնուհետեւ նշել է, որ այս բողոքը պետք է հայտարարվի անընդունելի, քանի որ դիմումատուն զգալի վնաս չի կրել: Այն մասնավորապես պնդել է, որ տվյալ հարցն իրապես կարելիություն չի ունեցել դիմումատուի համար՝ հաշվի առնելով տվյալ կալանքի հետ կապված վերջինիս ոչ ակտիվ վարքագիծը ներպետական մակարդակում:

16. Դիմումատուն Կառավարության պնդումների վերաբերյալ մեկնաբանություններ չի ներկայացրել:

1. *Ինչ վերաբերում է իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառմանը*

17. Դատարանը կրկին նշում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու կանոնի համաձայն՝ դիմումատուները պարտավոր են նախ եւ առաջ օգտվել իրավական պաշտպանության այն միջոցներից, որոնք ներպետական իրավական համակարգում սովորաբար հասանելի են եւ բավարար՝ ենթադրյալ խախտումների համար նրանց փոխհատուցում ստանալու հնարավորություն տալու համար (տե՛ս *Դեմոպուլոսը եւ այլք ընդդեմ Թուրքիայի* (որոշում) [ՄՊ] [*Demopoulos and Others v. Turkey* (dec.) [GC]], թիվ 46113/99 եւ այլն, ՄԻԵԴ 2010): Իրավական պաշտպանության նման միջոցների առկայությունը պետք է ոչ միայն տեսականորեն, այլ նաեւ գործնականում բավարար չափով որոշակի լինի, քանի որ դրանց բացակայությունը կհանգեցնի մատչելիության եւ արդյունավետության անհրաժեշտ մակարդակի բացակայությանը (տե՛ս *Պակասան ընդդեմ Լիտվայի* [ՄՊ] [*Paksas v. Lithuania* [GC]], թիվ 34932/04, § 75, ՄԻԵԴ 2011 (քաղվածքներ)): Իրավական պաշտպանության միջոցները չսպառելու մասին պնդող Կառավարությունը պարտավոր է Դատարանում ապացուցել, որ իրավական

պաշտպանության այդ միջոցը եղել է արդյունավետ, տվյալ ժամանակահատվածում տեսականորեն ու գործնականում հասանելի, այսինքն՝ այն մատչելի է եղել, դրա միջոցով հնարավոր է եղել դիմումատուի բողոքների մասով փոխհատուցում տրամադրել, ինչպես նաև դրանով ընձեռվել է հաջողության հասնելու ողջամիտ հեռանկար (տե՛ս *Քեննեդին ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Kennedy v. the United Kingdom*], թիվ 26839/05, § 109, 2010 թվականի մայիսի 18): Այն դեպքում, երբ ապացուցման այս պարտականությունը կատարված է, դիմումատուն պարտավոր է ապացուցել, որ Կառավարության կողմից առաջարկվող իրավական պաշտպանության միջոցն ըստ էության սպառված է եղել կամ որոշ պատճառներով գործի կոնկրետ հանգամանքներում եղել է ոչ պատշաճ եւ անարդյունավետ (տե՛ս *Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ] [*Selmouni v. France* [GC]], թիվ 25803/94, §§ 76, ՄԻԵԴ 1999-V):

18. Դատարանը նշում է, որ Կառավարության կողմից մեջբերված բոլոր գործերում, որոնցով դիմումատուները դատարանի կողմից թույլատրված իրենց կալանքն ավարտված կամ այլեւս ոչ օրինական լինելու հիմքով կալանավայրի վարչակազմին կամ գործը քննող դատարան ազատ արձակվելու միջնորդություն են ներկայացրել, տվյալ միջնորդություններն արդյունք չեն տվել եւ պարբերաբար մերժվել են նշված մարմինների կողմից՝ պարզապես հղում անելով ՔԴՕ-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասին (տե՛ս *Պողոսյանի* գործը՝ վերելում հիշատակված, §§ 15, 17, 18 եւ 21, *Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի* [*Piruzyan v. Armenia*], թիվ 33376/07, §§ 27-29, 2012 թվականի հունիսի 26, եւ *Մալխասյանն ընդդեմ Հայաստանի* [*Malkhasyan v. Armenia*], թիվ 6729/07, §§ 38-39, 2012 թվականի հունիսի 26): Հետեւաբար չի կարելի ասել, որ տվյալ իրավական պաշտպանության միջոցները հաջողության հասնելու ողջամիտ հեռանկար են ընձեռել եւ արդյունավետ են եղել: Ինչ վերաբերում է այն փաստարկին, որ դիմումատուն իր կալանավորման ենթադրաբար անօրինական լինելու հարցը չի բարձրացրել իր դատապարտման դեմ ներկայացված բողոքներում, Դատարանը նշում է, որ տվյալ բողոքները Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն դիմումատուի բողոքին չեն

առնչվում, քանի որ դրանք չեն վերաբերում նրա կալանքին, այլ առաջին ատյանի դատարանի կողմից իրեն դատապարտելու հետ են կապված: Այսպիսով իրավական պաշտպանության միջոցները չսպառելու մասին Կառավարության առարկությունն ընդունելու հիմքեր չկան:

## 2. *Ինչ վերաբերում է «զգալի վնասի» բացակայությանը*

19. Ինչ վերաբերում է Կառավարության պնդմանը, որ դիմումատուն զգալի վնաս չի կրել, Դատարանը կրկին նշում է, որ ընդունելիության այս չափորոշիչը հիմնվում է այն գաղափարի վրա, որ իրավունքի խախտումը, ինչքան էլ այն իսկապես տեղի ունեցած լինի մաքուր իրավական տեսանկյունից, պետք է հասնի այն նվազագույն ծանրության, որը հիմք է միջազգային դատարանի կողմից քննության արժանանալու համար: Այս նվազագույն մակարդակի գնահատումը, որպես կանոն, հարաբերական է եւ կախված է գործի բոլոր հանգամանքներից: Խախտման ծանրությունը գնահատվում է՝ հաշվի առնելով եւ դիմումատուի սուբյեկտիվ ընկալումները, եւ այն, թե որոշակի գործով ինչն է օբյեկտիվորեն վտանգվում (տե՛ս *Բաննիկովն ընդդեմ Լատվիայի* [*Bannikov v. Latvia*], թիվ 19279/03, § 57, 2013 թվականի հունիսի 11):

20. Դատարանը նշում է, որ սույն բողոքը վերաբերում է 2008 թվականի մայիսի 1-ից մինչեւ 13-ը դիմումատուի կալանքին, որը, նրա պնդմամբ, անօրինական է եղել: Հետեւաբար այն առնչվում է դիմումատուի համար սկզբունքային հարցի, այն է՝ ազատությունից զրկված չլինելու՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված նրա իրավունքին (տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), *Չամանսն ու Տիմոֆեյեան ընդդեմ Լատվիայի* [*Čamans and Timofejeva v. Latvia*], թիվ 42906/12, § 80, 2016 թվականի ապրիլի 28): Դատարանը բազմիցս ընդգծել է ժողովրդավարական հասարակությունում անձնական ազատության կարեւորությունը (տե՛ս *Շտորկն ընդդեմ Գերմանիայի* [*Storck v. Germany*], թիվ 61603/00, § 102, ՄԻԵԴ 2005-V, եւ



*Ստանեն ընդդեմ Բուլղարիայի* [*Stanev v. Bulgaria* [GC]], թիվ 36760/06, § 120, ՄԻԵԴ 2012): Փաստը, որ դիմումատուն չի օգտվել իրավական պաշտպանության միջոցներից, ինչը, ինչպես արդեն նշվել է վերելում, հաջողության հեռանկար չի ունեցել, չի նշանակում, որ հարցը կարելիություն չի ունեցել դիմումատուի համար: Հետեւաբար դատարանը գտնում է, որ չի հաստատվել դիմումատուի՝ զգալի վնաս կրած չլինելու փաստը, եւ մերժում է Կառավարության առարկությունը:

21. Դատարանը նշում է, որ այս բողոքը, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով, ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

#### **Բ. Ըստ էության քննությունը**

22. Դիմումատուն պնդել է, որ 2008 թվականի մայիսի 1-ից 13-ն իրեն կալանքի տակ պահելը օրենքով նախատեսված կարգով չի թույլատրվել դատարանի կողմից եւ հետեւաբար անօրինական է եղել: Այդ ընթացքում նա կալանքի տակ է պահվել ՔԴՕ-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով, ինչը չի կարող համարվել վավեր եւ օրինական հիմք:

23. Կառավարությունն ըստ էության քննության հետ կապված որեւէ դիտարկում չի ներկայացրել:

24. Դատարանը նշում է, որ արդեն քննել է համանման բողոք Հայաստանի դեմ բերված մեկ այլ գործով, որում եկել է եզրահանգման, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում առ այն, որ դիմումատուի նկատմամբ կալանքը չի կիրառվել համաձայն դատարանի որոշման եւ հետեւաբար չի եղել օրինական՝ այդ դրույթի իմաստով (տե՛ս *Պողոսյանի* գործը՝ վերելում հիշատակված, §§ 56-64): Դատարանը սույն գործով այլ եզրահանգում կատարելու որեւէ պատճառ չի տեսնում եւ եզրակացնում է, որ 2008 թվականի

մայիսի 1-ից 13-ը դիմումատուի նկատմամբ կիրառված կալանքը 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով օրինական չի եղել:

25. Հետեաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

## II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

26. Դիմումատուն բողոքել է, որ ներպետական դատարաններն իր կալանավորման համար չեն ներկայացրել հիմնավոր եւ բավարար պատճառներ: Նա հիմնվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի վրա, որն այնքանով, որքանով վերաբերելի է, ունի հետեւյալ բովանդակությունը.

«3.Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք ... ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչեւ դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:»:

### Ա. Ընդունելիությունը

27. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները: Նախ, նա վճռաբեկ բողոք չի ներկայացրել Վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մարտի 21-ի որոշման դեմ, ինչի իրավունքը նա ուներ ՔԴՕ-ի 403-րդ հոդվածով նախատեսված կարգով: Երկրորդ, այն բանից հետո, երբ 2008 թվականի մայիսի 13-ին գործը քննող դատարանը որոշել է գործը նշանակել դատական քննության եւ դիմումատուին պահել կալանքի տակ, ՔԴՕ-ի 136-րդ հոդվածով նախատեսված կարգով նա իրավունք է ունեցել գրավի դիմաց ազատ արձակվելու միջնորդություն ներկայացնելու, ինչը նա չի արել (տե՛ս *Մարտիրոսյանն ընդդեմ*

Հայաստանի [*Martirosyan v. Armenia*], թիվ 23341/06, § 44, 2013 թվականի փետրվարի 5):

28. Դիմումատուն, հղում անելով *Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի* [*Grigoryan v. Armenia*] գործին (թիվ 3627/06, §§ 71-73 եւ 113-114, 2012 թվականի հուլիսի 10), պնդել է, որ վճարել է բողոքը հասանելի եւ արդյունավետ իրավական պաշտպանության միջոց չի եղել:

29. Ինչ վերաբերում է Կառավարության առաջին փաստարկին, Դատարանը նշում է, որ այն արդեն քննել եւ մերժել է ընդդեմ Հայաստանի մեկ այլ գործով ներկայացված նմանատիպ առարկություն (տե՛ս *Արզումանյանն ընդդեմ Հայաստանի* [*Arzumanyan v. Armenia*], թիվ 25935/08, §§ 28-32, 2018 թվականի հունվարի 11): Սույն գործի պարագայում այն իր ավելի վաղ կատարած եզրահանգումներից շեղվելու որեւէ պատճառ չի տեսնում: Ինչ վերաբերում է Կառավարության երկրորդ փաստարկին, ապա Դատարանը նշում է, որ ի տարբերություն *Մարտիրոսյանի* գործի, որով դիմումատուն դատավարության ընթացքում գրեթե երկու տարի անցկացրել է կալանքի տակ առանց նույնիսկ գործը քննող դատարան գրավի դիմաց իրեն ազատ արձակելու միջնորդություն ներկայացնելու (տե՛ս *Մարտիրոսյանի* գործը՝ վերելում հիշատակված, § 45), սույն գործով դիմումատուի կալանքը դատական քննության ընթացքում տեսել է մեկ ամսից պակաս, այն է՝ 2008 թվականի մայիսի 13-ից մինչեւ հունիսի 11-ը: Ավելի վաղ՝ 2008 թվականի մարտի 10-ին, նա բողոքարկել էր գործը քննող դատարանի՝ իրեն կալանավորելու որոշման դեմ, մինչդեռ 2008 թվականի մայիսի 13-ի որոշումը վերաքննության կարգով չէր բողոքարկվել: Փաստը, որ դիմումատուն այդ կարճ ժամանակահատվածում գրավի դիմաց ազատ արձակվելու միջնորդություն չի ներկայացրել, բավարար հիմք չէ, որպեսզի Դատարանը եզրակացնի, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի առնչությամբ իր բողոքի մասով նա չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները: Հետեւաբար այն մերժում է չսպառելու մասով Կառավարության առարկությունը:

30. Դատարանը նշում է, որ այս բողոքը, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով, ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

#### **Բ. Ըստ էության քննությունը**

31. Դիմումատուն նշել է, որ դատարաններն իր կալանավորման համար չեն ներկայացրել հիմնավոր եւ բավարար պատճառներ:

32. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուին կալանավորելու համար դատարանները հիմնավոր եւ բավարար պատճառներ են ներկայացրել, ինչպես, օրինակ, թաքնվելու, քննությունը խոչընդոտելու եւ նոր հանցագործություն կատարելու ռիսկը:

33. Դատարանն անդրադառնում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սահմանված՝ մինչեւ դատական քննության ավարտն ազատ արձակվելու իրավունքին առնչվող սկզբունքներին (տե՛ս *Բուզադջին ընդդեմ Մոլդովայի Հանրապետության* [ՄՊ] [*Buzadji v. the Republic of Moldova* [GC]], թիվ 23755/07, §§ 92-102, ՄԻԵԴ 2016 (քաղվածքներ), եւ *Արա Հարությունյանի* գործը՝ վերելում հիշատակված, §§ 48-53) եւ նշում է, որ արդեն իսկ եզրահանգել է, որ կալանք նշանակելիս եւ դրա ժամկետը երկարաձգելիս կարծրատիպային ձեւակերպումների օգտագործումը հաճախ հանդիպող խնդիր է Հայաստանում (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի* [*Piruzyan v. Armenia*], թիվ 33376/07, §§ 97-100, 2012 թվականի հունիսի 26, *Մալխասյանն ընդդեմ Հայաստանի* [*Malkhasyan v. Armenia*], թիվ 6729/07, §§ 74-77, 2012 թվականի հունիսի 26, *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* [*Sefilyan v. Armenia*], թիվ 22491/08, §§ 88-93, 2012 թվականի հոկտեմբերի 2, եւ *Արա Հարությունյանի* գործը՝ վերելում հիշատակված, §§54-59): Սույն գործով ներպետական դատարանները նույն կերպ են հիմնավորել դիմումատուի շարունակական

կալանավորումը՝ միայն մեջբերելով ներպետական օրենսդրության համապատասխան իրավական սկզբունքները եւ անդրադառնալով հանցագործության ծանրությանը՝ առանց ներկայացնելու նրա գործի հատուկ փաստերը կամ ներկայացնելու մանրամասներ առ այն, թե ինչպես են հիմնավորվում թաքնվելու, արդարադատության իրականացումը խոչընդոտելու կամ կրկին հանցագործություն կատարելու ռիսկերը: Ուստի Դատարանը եզրակացնում է, որ ներպետական դատարանները չեն ներկայացրել հիմնավոր եւ բավարար պատճառներ դիմումատուին կալանավորելու համար:

34. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-ին կետի խախտում:

### III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՄՅՈՒՍ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

35. Վերջապես դիմումատուն ներկայացրել է մի շարք այլ բողոքներ՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի եւ 2-րդ կետի, 10-րդ եւ 11-րդ հոդվածների առնչությամբ:

36. Հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած բոլոր նյութերը եւ այնքանով, որքանով այդ բողոքները գտնվում են իր իրավասության ներքո՝ Դատարանը գտնում է, որ դրանցով չի բացահայտվում Կոնվենցիայով սահմանված իրավունքների եւ ազատությունների խախտման որեւէ դեպք: Այսպիսով հետեւում է, որ գանգատի այս մասը պետք է մերժվի՝ ակնհայտ անհիմն լինելու պատճառով՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի:

### IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

37. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի

ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:»:

#### **Ա. Վնասը**

38. Դիմումատուն պահանջել է 10 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

39. Կառավարությունը նշել է, որ դիմումատուն չի ներկայացրել որեւէ ապացույց առ այն, որ ինքը կրել է ոչ նյութական վնաս, եւ խնդրել է Դատարանին՝ մերժել վերջինիս պահանջը:

40. Դատարանը համարում է, որ դիմումատուն անկասկած կրել է ոչ նյութական վնաս՝ Կոնվենցիայի խախտումների առումով, եւ դիմումատուին շնորհում է 4 500 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

#### **Բ. Ծախսերը եւ ծախքերը**

41. Դիմումատուն ծախսերի եւ ծախքերի մասով որեւէ պահանջ չի ներկայացրել:

#### **Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը**

42. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

## ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. *Հայտարարում է 2008 թվականի մայիսի 1-ից 13-ը դիմումատուի կալանավորման ենթադրաբար անօրինական լինելու վերաբերյալ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետով ներկայացված բողոքը եւ իր կալանավորման համար ներպետական դատարանների կողմից հիմնավոր եւ բավարար պատճառներ ենթադրաբար չներկայացնելու վերաբերյալ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով ներկայացված բողոքն ընդունելի, իսկ գանգատի մնացած մասը՝ անընդունելի.*
2. *Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում.*
3. *Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում.*
4. *Վճռում է, որ՝*
  - ա) *պատասխանող պետությունը երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին ոչ նյութական վնասի դիմաց վճարի 4 500 եվրո (չորս հազար հինգ հարյուր եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ, որը պետք է փոխարկվի պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.*
  - բ) *վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.*
5. *Մերժում է դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:*

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2018 թվականի հոկտեմբերի 18-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Ռենատա Դեգեներ

Քրիստինա Պարդալոս

Քարտուղարի տեղակալ

Նախագահ